


ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՀԺԿ-ի ՈՒՍՈՒՑԻՉԱՆՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ  
ԳԻՏԱ-ՄԱՆԿԱՎԱՐՔԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

371.3

Հ-63 ԳՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Ա

ԹԵՂԵԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՆՑՆԵԼՈՒ  
ՅԵՎ ՈՒՂՂՈՒՄՆԵՐՆ  
ՈԴՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԶԵՎԵՐԸ



ՀՈՒՍՀՐԱՑ

ՅԵՐԵՎԱՆ

1940

1 MAR 2010

ԹԵԼԱՐՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՅԵՎ ՈՒՂՂՈՒՄՆԵՐՆ

ՈԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԶԵՎԵՐԸ

1. ԳՐԱՎԱՐԻ ՆՊԱՏԱԿԸ

1939 թվականի ապրիլի 7-ը դեկտեմբերի 10-ը գասարանների ստուգողական թելագրությունների հետազոտությունը ցույց տվեց, վոր սւեզումների, սխալների հաշվառման և զնահատումների վերաբերյալ մեր գպրոցներում միասնական ձեեր չկան Յուրաքանչյուր ուսուցիչ ունի սխալների հաշվառման իր ուրույն ձեերը և զնահատման վերաբերյալ իր անհատական մոտեցումը: Գրավոր աշխատանքների սրբադրման և գնահատման բազմազանության արդյունքը լինում է այն, վոր գրագիտության միենույն մակարդակի վրա գտնվող աշակերտները տարբեր գպրոցներում տարբեր գնահատականներ են ստանում: Յեթե հաշվի առնենք, վոր աշակերտի առաջադիմության շարժումը մեծապես կապված է նրա կատարած աշխատանքների նիւթ հաշվառման և ուստի զնահատման հետ, ապա պիտի գանք այն յեզրակացնելու մասին: Վերաբերյանը, վոր այս գործում միասնականություն մացնելու անհրաժեշտ պահանջ ե բոլոր գպրոցների համար:

Բնդիանբագիս մարդիկ կյանքում գործ են ունենում գրելու 3 ձեերի հետ՝ ա) շարադրում են իրենց մաքերը, բ) զրում են ուրիշի թելագրածը և գ) արտադրում են ուրիշի գրածը: Այս աշխատանքներից յուրաքանչյուրն ունի իր մեթոդական պահանջներն ու գործադրման առանձին ձեերը: Քանի վոր ուղղաց գրության ուսուցման գործում, ինչպես նաև աշակերտի ուղղաց գրական գիտելիքներն ատուգելու գործում առավել կարևոր նշանակություն ունի թելագրությունը, մենք կանգ ենք առնելու գլխավորապես այն աշխատանքների վրա, վորոնք կապված են թելագրության հետ:

Թելագրությունը հետապնդում ե յերկու նպատակ՝ ամրացնել, խորացնել սովորած ուղղագրական կանոնը և ստուգել նրա յուրաքանչյուր սիրածությունը, մենք կանգ ենք առնելու գլխավորապես այն աշխատանքների վրա, վորոնք կապված են թելագրության հետ:

Պատ. իմբազիր Ա. Ա. ԱՐԻԵՑՅԱՆ

Արքագրիչ՝ Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

Կոնտրոլ սօբագրիչ՝ Մ. ԱԱՐՈՒԵԿՅԱՆ

Հանձնված է արտադրության 1940 թ. հունիսի 22-ին:

Ստորագրված է տպագրության 1940 թ. սպոոտության թուղթում:

Դրամիարժ լիտար՝ Ա.-467, հրատ. թ 54, պատվեր թ 162, տիրած 1500



841

Կ

բացման չափը: Թելաղըության շատ յերդվյալ հակառակորդներ անտեսում են գրավորի այդ տեսակի ուսուցողական նշանակությունը և վերցնելով նրա միայն մի կողմը՝ արամաբանորեն հետեւցնում են, զոր քատ ամենայնի պիտի խուսափել այդ աջաւատանքից՝ նվազագույնի հասցնելով նրա թիվը: Այդ տեսակետն, ի հարկի, քննադատության դիմանալ չի կարող և հիմնված է միանգամայն սխալ հետեւթյունների վրա: Մենք ունենք 2 հազարից ավելի բառեր, վորոնց արտասանությունը տարբեր ե գրությունից: այս բառերի ուղղագրության յուրացումը միայն բառապատճենների հետ կապելը կլիներ սխար: Ապահով ե միայն այն բառի գրության յուրացումը, վորի վերաբերյալ գուգուդում են ավելի շատ մտապատճեններ (և՝ տեսողական, և՝ լսողական, և՝ շարժումային և այլն): Նույնիսկ քերականական տիպի սխալները կանխելու համար անհրաժեշտ ե գործադրել թերազրության մի շարք ձևեր, իսկ հնչյունական, ինչպես նաև բարբառային տիպի սխալները վերացնելու համար, վերջին հաշվով, ամենակարեւոր միջոցներից մեկը պիտի մնա թելադրությունը, յերբ աշակերտը բանավոր վարժություններ կատարելուց հետո ուսուցչի ձիշտ արտառանությունը զուգակցում ե իր՝ գրելու համար կատարած շարժումներին և ստացած բառապատճենին:

Ուսուցողական, նախազգուշական նպատակներով տրվող թելադրությունները բաղմատեսակ են՝ նախազգուշական, դիտողական, բացատրական, տեսողական, լսողական, ինքնաթելադրություն, աղատ թելադրություն և այլն: Թելազրության այս տիպերի կողքին դրամագրվում ե նաև խառը տիպի, կոմբինացիոն թելադրություններ՝ դիտողաբացատրական, տեսողաբացատրական, և այլն: Այս ախպի թելադրությունների հիմնական նպատակները ուղղագրական կանոնի յուրացման խորացումն ե: Յենթադրենք աշակերտը սովորել է «ը»-ի ուղղագրությունը, կատարվել են մի շարք վարժություններ, այդ կանոնը կրկնելուց հետո ուսուցչը կազմում կամ ընտրում է «ը»-ով զրվող բառերով հադեցած տեքստ և թելադրություն գրել տալով՝ հիմնավորապես ամրացնում, կայունացնում և հրցյալ բառերի գրությունը աշակերտների հիշության մեջ: Այդ նպատակին կարելի յե համեմ միայն այն ժամանակ, յերբ կանխվեն հավանական սխալները: Թելազրության հակառակորդներն ի միջիայլոց հիմնավորում են իրենց բացատրական վերաբերմունքը նաև նրանով, վոր, իբր, թելադրությամբ աշակերտներին առիթ ենք տալիս բառերը սխալ գրել,

վորով կատար ենք հասցնում նրա ուղղագրական հմտություններ ձեռք բերելուն: Թելազրություններն անհրաժեշտ են, վորպեսզի աշակերտաները «սխալ» լսելով՝ ուղիղը գրեն և այսպիսով, զուգակցեն «գարգիխ» լսելը «գարբիխ» զրությանը: Աշակերտն այդպիսի հարյուրավոր բառեր գրելու հմտությունը պիտի ձեռք բերի. և յեթե լսելու և գրելու այսպիսի գուգուդում չլինի, ինչպես այդ կարող ե պատահել, յեթե աշակերտը բառի ուղղագրությունը սովորած լինի միայն արտագրությամբ, հետագայում, յերբ առիթ լինի այդ բառը գրել ուրիշի թելազրությամբ (իսկ այդպիսի առիթներից կյանքը ուսումափել անհնար ե), ապա հնարավոր ե, յերբեմն նույնիսկ հավանական, վոր տվյալ անձնավորությունը սխալ վրի բառը այդ բառը, քանի վոր այդ բառի միայն տեսողական պատկերներ յուրացված, այսինքն՝ յուրացումը կայուն չի է, հմտություն չի ը դարձած: Սրանից հետեւում ե, վոր թելադրությունը կազմակերպելիս պետք ե ձեռք առնել բոլոր միջոցները, վորպեսզի աշակերտները «սխալ» արտասանության աղղեցության տակ բառը սխալ չգրեն: Աշակերտին պիտի վարժեցնել գրական ճիշտ արտասանությամբ լսելով գրել ընդունված ուղղագրությամբ բոլոր իրեն ծանոթ բառերը: Մեր նպատակից դուրս ե պարզաբանել թելազրության յուրաքանչյուր տիպը և նրա հետ կապված աշխատանքները\*): Ուսուցողական տիպի բոլոր թելազրությունների ժամանակ ել ուսուցիչը պետք ե ճիշտի, վոր սխալները կանխելը հիմնական նպատակ ե: Դրա համար հարկավոր ե բառերը բացատրել, ստուգաբանել, կրկնել ուղղագրական կանոնը, գրել գրատախտակին, իսկ յեթե ուսուցիչը վստահ չի, վոր կանխվեցին բոլոր սխալները, ապա նաև թողնել գրածը թելազրությունը գրելու ամբողջ ընթացքում:

Մեր գպրցներում համեմատաբար ամենից շատ գործազըրվող և հանձնաբարելի թելազրություններն են՝ նախազգուշական, բացատրական և դիտողական՝ ցածր գասարաններում, աղատ թելազրություն ու ինքնաթելազրություն՝ բարձր գասարաններում: Այս տիպի բոլոր թելազրությունների ժամանակ, յեթե աշակերտներն ուսուցչին հարցնում են վորեն բառի գրությունը, նա պիտի ասի:

Բոլորովին տարբեր ե ստուգողական բնույթի թելազրությունը: Ինչպես հենց անունից յերեսում ե, այստեղ նպատակը

\*) Տես՝ Ա. Ղարիբյան. Հայոց լեզվի սովորական հիմունքները: 1983 թիվ, Յերևան

միայն ստուգումն եւ Անհնարին և լավ կազմակերպել հետագա աշխատանքները, առանց ստուգելու անցած նյութի յուրացման չափը հարաբեկ, ստուգողական թելադրությունը ստուգման միակ միջոցը չի հանդիսանում, բոլոր գրավոր աշխատանքների ժամանակ էլ ուսուցիչը հնարավորություն ունի հետեւյու աշակերտի առաջադիմության առաջընթացին, ստուգելու անցած նյութի յուրացման չափը թայց ստուգողական թելադրությունն ուսուցչին հնարավորություն և տալիս ստուգելու մի ամբողջական թեմա, վորի մեջ կուրող են մտնել մի շարք յենթաթեմաներ:

Ասածներից հետեւմ ն, վոր նախազդուշական-ուսուցողական նպատակներ հետապնդող թելադրությունների քանակն անհամեմատ ավելի կլինի, քան ստուգողական Բնորդանը աշխատուգողական թելադրություն պետք ետալ յուրաքանչյուր քառորդի վերջում, թեև յիթե հարկը պահանջում է, կարելի յի տալ նաև առանձին դեպքերում, յերբ ուղղագրության վորեն ամրացնություն կաղմող մաս անցել-վերջացրել են, և ուսուցիչն անհըրաժեշտ է համարում ստուգել անցած նյութի յուրացման չափը, վորպեսզի զրա համապատասխան պլանափորի նոր նյութը:

### ՏԵՔՍՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Թելադրության տեքստը, նայած զառարանին, պիտի պարունակի բառերի վորոշ քանակ, վոր նշված է ՀԽՍՀ կուսակի հրահանգում: Թելադրություններ տալիս պիտք ե մնալ այդ նորմաների սահմաններում, վոչ միայն այն պատճառով, վոր բառերի ավելի պակաս քանակ թելադրելիս գնահատական արհեստական ձևով կրաքարանա, և ուսուցիչը հնարավորություն չի ունենա ճիշտ հետեւություններ անելու, այլև այն պատճառով, վոր զասատուն, յեթե սովորելիք 60 բառի փոխարեն թելադրում է 30-ը, այսինքն  $50^0/_{0^{\circ}}$ ը, ապա աշխատանքի արդյունքն էլ  $50^0/_{0^{\circ}}$ -ով պակաս կլինի:

Թելադրության տեքստը կարելի յի և ընտրել, և կազմել Եթե զասատուն տեքստը կազմելու մեջ հմտու ե, ապա լսով կլինի, վոր ինքը կազմի տեքստը, վորովհետեւ այդ գեղքում միայն հնարավորություն կունենա իր ցանկացած բոլոր բառերը մտցնել տեքստի մեջ, հակառակ գեղքում նա պիտի շատ ուշազիր, մահարակիտ պրատումներ կատարի, վոր կարողանա դունել իր՝ գոնե մինիմալ պահանջները բավարարող տեքստ: Բնտրություն կատարելիս դասատուն պիտի ուշադրություն դարձնի տեքստի

հազեցվածության վրա: Հաճախ դասատուն մտահոգվում է բառերի քանակը ճշտությամբ պահպանելու հողառվ, աշքաթող անելով տեքստի վորակը: Ամեն թելադրություն տալիս դասատուն պիտի իր առաջ ունենա վորոշակի նպատակ և այդ նպատակին համապատասխան տեքստը ընտրի: Գետք ե աշխատել հնարավորին չափ հազեցնել տեքստը տվյալ ուղղագրական կանոնին վերաբերող շատ բառերով, հատկապես՝ շատ զործածական: Յերբեմն դասատուն դասագրքից ընտրում ե վորեւ տեքստ, առանց հաշվի առնելու նրա հազեցվածությունը ցանկալի բառերով: այդ նշանակում է՝ թելադրությունը ձևական բնույթ ե կրում, ուսուցիչն աշխատանքը կատարում ե պարզաբնակ պատրերու հաշվարելու համար, նրան չի հետաքրքրում ստացվելիք արդյունքը:

Թելադրությունները լինում են թեմաթիկ, յերբ տեքստն ընդգրերկում ե ուղղագրական վորեւ կանոն միայն, և ընդհանուր, յերբ տեքստի մեջ մտնում են ուղղագրական մի շարք կանոններին վերաբերող բառեր:

Անհրաժեշտ և խուսափել հոռոմ, ծանր, խճողված վոճով գրված տեքստից, տեքստի լիզուն պետք ելինի որինակելի, զերծ անձանոթ բառերից: Յեթե անձանոթ բառերից խուսափելը հնարավոր չե, ապա գրանք պետք ե բացարձել վոչ միայն իմաստի տևակետից, այլև ուղղագրորեն: Տեքստն ընտրողը պիտի հաշվի տանի, վոր աշակերտները թելադրության սկզբում ավելի թարմ են, քան թե վերջում: գրելու ընթացքում նրանց լարվածությունը հետզետեև իջնում է, և ուշագրությունը թուլանում, այդ պատճառով պիտի աշխատել, վոր տեքստի վերջին մասերն ընդհանրապես ավելի թեթև լինեն, վոր այդ մասում ստուգվող կանոնին վերաբերող բառերի քանակը համեմատարար ավելի պակաս լինի: Տեքստ ընտրելիս պետք ե խուսափել նաև յերկու և ավելի տեսակ զրություն ունեցող բառերից, ինչպես նաև այնպիսի բառերից, վորոնց ուղղագրությունը կայուն, վորոշ չե:

ԹԵԼԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Բոլոր տեսակի թելադրությունները վերջին հաշվով կարելի յի բաժանել յերկու խմբի՝ ուսուցողական (նախազգուշական) և ստուգպահուն: Առաջին ափակի բոլոր տեսակի թելադրությունների ժամանակ ել մեր նպատակն այն ե, վոր աշակերտը բառը լի գրական արտասանությամբ և գրի ընդունված ուղղագրությամբ, վորպեսզի լսողական, շարժողական, հաճախ

նաև արտասահմական տպավորությունները զուգակցելով՝ կարուղանա լիովին յուրացնել բառի ուղղագրությունը։ Հասկանալի յե վոր այս նպատակը հենց ինքն ել թելավրում և իր մեթոդական պահանջները՝ ձեռք առնել կանխող միջոցները՝ ընդհուպ մինչև աշակերտին ոգնության համար նույնիսկ դրելու ժամանակը ի հարկե, այդ ոգնությունը չպիտի հանգի նրան, վոր աշակերտն իր հույսը դնի դասաւովի ոգնության վրա և չսովորի. չնախապատրաստվի գրելու համար։

Ստուգողական թելավրությունների ժամանակի, ընդհակառակն, ուսուցչի նպատակը միայն ստուգելու և, ուստի թելավրությունն այնպես պիտի կազմակերպի, վոր կողմանակի վոչ մի տեսակի ոգնություն չխանգարի ճիշտ զրաերել աշակերտի ունակությունները։ Վերջին հանգամանքը խիստ կարելու և Տվյալ գասարանի ուսուցիչն ուղղագրության գործում այնքան ավելի հաջողություն կունենա, վորքան ավելի ճշուծթյամբ կկարողանա պարզել իր աշակերտների գրագիտության աստիճանը և ուղղագրական առանձնահատկությունները։ Աշակերտների գրագիտությունը բարձրացնելու հումար գործարվող միջոցները միասին լինել չեն կարող նայած աշակերտն ինչ հարցերում ե յիս թում, ըստ այնմ ել ուսուցիչը համապատասխան միջոցներ և ձեռնարկում։

Հենց աշակերտների գրագիտության աստիճանը և նրանց յետամասցության պատճառները վորոցելն ել հանդիսանում ե ընդհանուր ստուգողական թելավրության նպատակը։ Յեթե ուսուցիչը չի կարողանում ինչպես հարկն ե, կազմակերպել թելավրությունը, ապա ստացված արդյունքները չեն պարզի աշակերտների պատրաստականության ճիշտ պատկերը։ Բոլոր ուսուցիչներին հայտնի կլինեն բազմաթիվ գեղքեր, յերբ աշակերտները կողմնակի ոգնությունների միջոցով կարողացել են սքողել իրենց անզրագիտությունը և ստանալ բարձր գնահատական, ի հարկե, ուշիմ և բարեխիզ ուսուցիչը վերջի վերջո կարողանա ձանաշել իր աշակերտների պատրաստության ճիշտ պատկերը, բայց կարևորն այն ե, վոր ամեն գեղքում պարզի յուրաքանչյուր թելավրության մեջ արված ուղղագրական ավյալ կանոնների յուրացման չափը։ Ուսուցիչը թելավրությունը սրբագրելուց հետո պիտի ճիշտ հետեւություններ անի, թե ով վոր կանոնը չի յուրացըել, ով ինչ սխալներ ե կատարել վոր աշակերտը ուղղագրական ունակությունների տեսակետից ինչպիսի ուսանձ-

նահատկություններ ունի և այլն, վորպեսզի կարողանա նամապատասխան միջոցառումներ մշակել։

Թելավրությունը պետք է կազմակերպել այնպիս, վոր գրելու ամբողջ ընթացքում գասարանում լինի բացարձակ լուություն։ Աղմուկը նշասակար և վոչ միայն այն տեսակետից, վոր աշակերտները լավ չեն լսի, կենտրոնանալ չեն կարողանա և այդպատճառով ել կկատարեն ավելորդ սխալներ, այլ և այն պատճառով, վոր աղմուկն աշակերտներին հնարավորություն կտացնացած բառերի ուղղագրությունն ստուգել կարող ընկերների միջոցով և համապատասխան ձեռվ սրբագրել իր սխալները։ Ուրիշներին հարցնելը յերբեմն տալիս ե նաև հակառակ արդյունք։ Աշակերտն իր ուղիղ գրությունները փոխում ե՝ ընկերների միջամտության շնորհիվ։ Վոր կողմից ել մոտենանք հարցին, կտեսնենք, վոր բացարձակ լուություն ստեղծելը թելավրություն գրելու անհրաժեշտ պայմանն ե։ Սրան հասնելու համար ամենից առաջ անհրաժեշտ աշակերտներին դաստիարակել այնպես, վոր նրանք դասարան մանեն թելավրությանը նախապատրաստված։ Ամենայն վճռականությամբ պետք ե դաստիարակել այն պրակտիկան, յերբ հենց թելավրության ժամանակ աշակերտներն դրազլում են թանաք, տեսլը, գրիչ և այլն ձեռք բերելու գործով։

Ուսուցիչը թելավրությանն անցնում է միայն ժամանակ, յերբ ամեն ինչ համարում է պատրաստ, վորպեսզի թելավրություն ժամանակ աշակերտների ուշագրությունն ուրիշ վոչ մի բանով չզբաղվի։ Գրել սկսելուց առաջ ուսուցիչը մի անգամ սահման, ճիշտ և գրական արտասանությամբ կարդում ե ամբողջ տեքստը։ Զի կարելի աշակերտներին հուշելու դիսավորությամբ անտեսել բառերի գրական արտասանությունը՝ նույնացնելով գրությունն ու արտասանությունը, և վոչ ել բառերի արտասանությունը «գրական» զարձնելու համար բռնագրուիկ կերպով հետացնել գրությունից։ Կան բազմաթիվ ուսուցիչներ, վորոնք արտասանում են վարդ, յերբեմն, բարձր, խաբեբա, վոչ միայն այն պատճառով, վոր գա համապատասխանում ե իրենց բարբառային արտասանությանը։ Հաճախ գա արգում և գիտակցութեն, վորպես լեզվի «գրականացման» անհրաժեշտ միջոց, իսկ յերբեմն ել պարզապես աշակերտին հուշելու դիտավորությամբ թե վարդն ե լինելու մեր գրական արտասանության զարգացման ուղին, գա այլ հարց ե, բայց այժմ մենք ունենք կայունացած գրական արտասանություն, և այն արհեստականորեն փոփոխու-

թյան յենթարկելը՝ հոգուտ արտասանության և դրության  
 նույնացման՝ անընդունելի յե և դատապարտելի: Յեթե արտա-  
 սանությունը գրությանը մոտեցնելու հարցը դրվի, ապա ավելի  
 հեշտ և նպատակահարմար կլինի, թերեւ, գրել խափեփու և վոչ թե  
 արտասանել խարեբա, այսինքն գրությունը մոտեցնել արտասա-  
 նությանը և վոչ ընդհակառակը: Մեր գրականության արտասա-  
 նության և բառի գրության տարբերության հարցը բավարար  
 չափով լուսաբանված և ֆիլոլոգիական գիտության դոկտոր՝ Դա-  
 րեբյանի քերականության մեջ\*), վորով և պիտի առաջնորդվել  
 այս հարցը լուծելիս Վերեվում ասացինք, վոր տեքստը անձա-  
 նոթ բառ չպիտի պարունակի, իսկ յեթե այդպիսի բառերից ա-  
 զատվելը հնարավոր չի յեղել առա կամ կարդալու ընթացքում  
 (յեթե հնարավոր և արտգ, առանց ընթերցումն ընդհատելու կոմ  
 վերջացնելուց հետո պետք և այդպիսի բառերը բացատրվեն և  
 յեթե ուղղագրական դժվարություն են ներկայացնում, նույնիսկ  
 գրեն գրատախտակին՝ մանավանդ ստորին դասարաններում):  
 Բառերի բացատրության այս յեղանակը սիստեմ չպիտի դարձ-  
 նել և աշակերտների սխաները կանխելուն ծառայեցնել: Տեքստը  
 կարդալուց և հարկ, յեղած բացատրությունները տալուց հետո  
 ուսուցիչը կարգում և առանձին նախադասությունը, աշակերտ-  
 ները լուս կրկնում են մտքում և հետո միայն սկսում դրել: Յե-  
 թե նախադասությունը յերկար ե, և աշակերտները կղժվարա-  
 նան հիշողությամբ գրել կարելի յե բաժանել այն ավելի փոքր  
 մասերի՝ նախադասությունների կամ բառախմբերի: Այս բառա-  
 խմբերը, սակայն, պիտի վորոշ ամբողջականություն ունենան: Չի  
 կարելի մասերի բաժանելիս նախադասությունն այնպիսի տեղ  
 ընդհատել, վոր անհեթեթություն ստացվի: Թելաղբեկս նախա-  
 դասությունը կամ բառախմումը պիտի կրկնել 1—2, անհրաժեշտ  
 դեպքում միայն 3 անգամ, բայց վոչ ավելի: Հանրահայտ փաստ  
 ե, վոր աշակերտները դիջող ուսուցչին ստիպում են կրկնել նա-  
 խադասությունները բազմաթիվ անգամ: Դա ունի այն վը-  
 տանգավոր կողմը, վոր ցըլում և աշակերտի ուշագրությունը,  
 աշակերտը դադարում ե ինքնապաստանելուց, հույսը դնում ե  
 ուսուցչի վրա և գրում բառ առ բառ, հաճախ նույնիսկ վանկ  
 առ վանկ: Յեթե մեզ հաջողվեց լսել և գրել տալ ամբողջական  
 նախադասությունները, ապա դա աշակերտի համար կդանա

\*) Ա. Հարեբյան, Հայոց լեզվի քերականություն, 1939 թիվ.

նմտություն և չատ բանում կնպաստի նրան: Հաճախակի կրկնեա  
 լու մյուս վտանգավոր կողմն ել այն ե, վոր յուրաքանչյուր ա-  
 շակերտ ուսուցչին ստիպում ե կրկնելու իրեն անհրաժեշտ մասը,  
 և դատարանում ստեղծվում է յերեմն անսահելի ժխոր, վորը հենց  
 նպաստող հանդամանք և դառնում միալիներ շատ անելուն: Յեթե  
 աշակերտները վարժված չեն ցույց տված ձեռվ գրելուն, իսկապես  
 ուսուցչին սկզբում դժվար կլինի վարժեցնել նրանց, բայց մի քանի  
 փորձից հետո աշակերտները ձեռք կբերեն ուշադիր լինելու և  
 այդ ձվով գրելու հմտություն, և այլևս վոչ մի դժգոհություն  
 այդ առթիվ չի լինի:

Ուսուցիչը թելաղբրության ժամանակ հաշվի յե առնում  
 ամենադադար գրող աշակերտներին (վոչ բացառիկ) և նրանց  
 գրելուց հետո յե միայն անցնում հաջորդ նախադասությանը,  
 այնպես վոր յեթե այնուամենայնիվ յետ մնացողները լինում են,  
 ապա դրա պատճառն ուրիշ ե, այն պիտի գտնել և կանխել  
 Սովորաբար յետ և մնում այն աշակերտը, վորն ուշադիր չի լը-  
 նում ափրոջ նախադասությունը, կամ գրելիս ընկերոջը բան և  
 հարցնում, հուշում և բառի ուղղի գրությունը հարեանին և այլն:  
 Բոլոր այդպիսի հանդամանքները պիտի արմատախիլ անել. ա-  
 շակերտը դրելիս հոյսը պիտի դինի միայն իր վրա: Ուսուցիչը  
 վոչ միայն ինքը չպիտի ավելացր անգամ կրկնի, այլև թույլ չպիտի  
 տա նույնը անել աշակերտներին: Խոտիվ պիտի հետմել, վոր  
 աշակերտները միմյանցից չարտադրեն: Այդ ֆլասակար և վոչ մի-  
 այն այն անսակետից, վոր աշակերտն ավելի բարձր գնահատա-  
 կան կստանա, քան արժանի յե, այլև այն տեսակետից, վոր միշտաք  
 աշակերտները ուշադիր չեն, չեն հետեւմ, չեն սովորում: Միմիկայն  
 իրենց հույսը հուշելու վրա դնելու պատճառով: Յեթե նրանք  
 իրենց հույսը կտրեն հուշելով լավ դնահատական ստանալուց,  
 ապա սիփական ջանքերով ստիպված կլինեն ձեռք բերել այն և  
 կդառնան ուշիմ, հետաքրքրվող, սովորող:

Պետք և խստիվ պայքարել դիսցիպլինան խախտելու ամեն  
 մի փորձի զեմ: Շատ հաճախ ազմուկ սանդղվում ե, յերբ ուսու-  
 ցիչը հարկ յեղած չափեց ցածր և բնելազրում, աղավաղում կամ  
 անորոշ և արտասանում բառերի վերջավորությունները և այլն:  
 Ուսուցիչը պիտի կարդա բարձր, հստակ, զրական արտասանու-  
 թյամբ, բառերի վերջավորությունն արտասանի պարզ ու վորոշ:

Թելաղբրությունն արտասելուց հետո ուսուցիչը նորից մեկ  
 անգամ դանդար կարգում և անքստը, վորի ընթացքում աշա-

կերտները հնարավորություն են ստանում ուղղել իրենց նկատած բոլոր սխալները, գրանից ճետո աշխատանքներն անմիջապես հավաքվում են:

### ԳՐԱՎՈՐՆԵՐԻ ՍՐԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ուղղագրության ուսուցման տեսակետից շատ կարելոր և գրավորների սրբագրությունը: Ուսումնատիրությունները ցույց են տալիս, վոր ուղղումների հարցում միասնություն գոյություն չունի: Հաճախ միենույն դպրոցում կողք-կողքի աշխատող ուսուցիչները տարբեր ձեվով են սրբազրում աշխատանքները:

Գրավորներն ուղղելիս պետք է նկատի առնել հետեւյալ մումինաները, տառասխանները, առղաղարձի սխալները, մեծատառի և փոքրատառի սխալները, բառերի միացման և բառի մասերն անջատ դրելու սխալները, կետաղբական սխալները, ինչպես նաև գրավորի մաքրությունն ու ընթեռնելիությունը, տառերի համաշխատությունը, տողերի հավասարությունը (լուսանցքը չանցնելը և տողերը լուսանցքի գծին հասցնելը), և այլն: Զպետք և անտեսել նաև տառերը և կետերը սխալ գրելու դեպքերը Բացառիկ յերեվույթ չե, յերբ աշակերտն այս կամ այն տառը զրել չգիտե (հատկապես մեծատառերը՝ Զ, Զ, Զ, Զ ինչպես նաև հարցական նշանը բացականչական նշանը, շեշտը, բութը և այլն): Առաջին հայացքից թվում ե, թե սրանք այնպիսի մանրութներ են, վոր մանավանդ բարձր դասարաններում չարժե սրանց վրա կանոն առնել: Իրապիս այդ տեսակետը սխալ և վնասակար: Մենք չենք կարող ասել, թի 8-րդ դասարանում տառ կամ կետ գրել սովորեցնելը մեր գործը չեւ Յեթե աշակերտը նախորդ տարիների ծրագրեց վորելիք կարեվար բան չի յուրացրել մենք բոլոր միջոցներով պիտի սահմանը նրան սովորել գոյն այժմ, ուրիշ ճար չկա: Միջոցներ ձեռք առնել և սովորեցնել կարող ենք միայն այն ժամանակ, յերբ ուղղումների միջոցով արտահայտել և հաշվի յենք առել այդ թերությունները Այսակ խոսքն այն մասին չե, վոր մենք հաշվի առնենք բոլոր այդ թիւրությունները վորպես սխալ և իջեցնենք աշակերտի զնահատականը այլ այն մասին, վոր յերեան հանենք այդ թերությունները և վերացնենք:

Ի՞նչպես կատարել ուղղումները: Վեճի առարկա յե, թե պետք է ուղղել այնպես, վոր յերեվա միայն ճիշտ գրությունը, թե կարելի յի այնպես ուղղել, վոր նկատվի նաև սխալ գրաթյունը

Առաջին տեսակետը պաշտպանողները պահանջում են բառի սխալ գրած տառն այնպես փոխել, վոր յերեվա միայն ճիշտ գրությունը, սխալ նկատելի չլինի: Այդ բանը, յեթե նույնիսկ ըստ ամենայնի ընդունելի ել համարենք, հնարավոր և կիրառել միայն առաջին դասարանում, բայց վոչ յերեկք բարձր դասարաններում, վորտեղ գրում են 80—200 բառ և կատարում են յերեկմն բաղմաթիվ սխալներ: Բայց այդ տեսակետն ունի իր մի ուրիշ խոցելիք կողմբ: Յեթե սխալներն այնպես ուղղենք, վոր հին գրությունը բոլորովին նկատելի չլինի, ապա աշակերտը բոլորովին ել չի կարդա և ուշագրություն չի գարձնի այդ բառի վրա, ուրիշն և չի իմանա, թե ինչ սխալ և կատարել և միջոցներ ձեռք չի առնի վերացնելու իր սխալը: Յեթե սխալ տառը ուղղենք տարբեր թանաքով (կարմիր), բայց այնպես, վոր նախակին գրածը չերեվա, ապա աշակերտն ավելի մեծ հատաքրքրությամբ պիտի վորոնումներ կատարի ստուգելու համար իր կատարած սխալը, և այստեղ ավելի մեծ հավանականություն և ստեղծվում, թե սխալ ավելի ուժեղ կտպավորվի և կմնա հիշողության մեջ, քան ուղիղը:

Պետք և դաստիարակել աշակերտի մեջ գիտակցական վերաբերումներ գետի իր կատարած սխալները և ստիպել վոր նակամքի լարումով վարժվի և յուրացնի ճիշտ գրությունը: Վերջին գրութը համարելով միակ ճիշտ մոտեցումը ուղղագրության ուսուցման գրութը հանձնարարելի պիտի հաշվել գրավորները սրբագրելու հետեւյալ ձևը: Վորպես կանոն պետք և տառասխան ընդգծել տարբեր թանաքով (կարմիր), սխալ գրած տառի վրա գիծ քաշել և վերը գրել պահանջված տառը: Յեթե ուսուցիչը գտնում է, վոր թեթեվակի հիշեցումը բավական և աշակերտին ձանաչելու իր սխալը, ապա կարելի յի միայն ընդգծել սխալ գրած բառը, ուրիշ վոչինչ: Տողագրածի սխալը նույնպես պետք և ընդգծել և համապատասխան փոփոխություններով ցույց տալ թե ինչպես և հարկավոր սովորական կատարել: Իսկ յեթե ուսուցիչը հավատացած է, թե աշակերտը կհասկանա իր սխալը և կկարողանա ուղիղ վանկատել բառը, ապա կարելի յի միայն ընդգծել սխալը: Եռույն ձեզով վարվում ենք նաև մեծատառի և փոքրատառի սխալների հետ: Աշակերտը նոր նախադասությունն սկսել և փոքրատառով, իսկ նախադասության մեջ վորեն բառ անտեղի մեծատառ և գրել բավական և ընդգծել այդպիսի պետքում, և աշակերտն առանց վորեն դժվարության կնկատի

իր սխալը: Բայց յեթե աշակերտը յեւթուպահան բառը համարել  
է հատուկ անուն և զրել է մեծատառով կամ չոկտեմբերյան  
չեղափոխություն բառերից յերկրորդը գրել փոքրատա-  
ռով, ապա վոչ միայն պետք և ընդգծել տյլ և զրել ուղիղը և  
գրավորները վերագրածներիս բացատրել աշակերտին իր կատա-  
րած սխալների եյտությունը: Ավել գրած տառը պետք և ընդգծել  
և վրան գիծ քաշել, բայց թողած տառն ավելացնել համապատաս-  
խան տեղում՝ նախապես դնելով պահանջվելիք նշանը (Վ) և դար-  
ձյալ ընդգծել: Բառերի միացման սխալները նույնական անհա-  
ժեշտ և ընդգծել և բառերն անջատել ուղղահայաց գծով: բարդ  
կամ ածանցավոր բառերի անջատ գրած մասերը մի գծով հար-  
կավոր և միացնել և տակն ընդգծել:

Կետադրական բոլոր սխալներն ընդգծվում են մեկ գծով և  
ուղղվում, այսինքն, յեթե կետ չկա՝ դնում հն, ավելորդ ե՝ ջըն-  
ջում, սխալ և զրված՝ յեղածի վրա գիծ քաշում և հարկավոր  
կետը դնում: Անհամաշափ տառերը հավասարեցնում ենք, կամ  
վորելիք նշանով աշակերտի ուշադրությունը հրավիրում այդ հան-  
գամանքի վրա: Կիսուտ թողած տողերը գծերով հասցնում, ենք  
լուսանցքին, լուսունցքի գծից անցած մասերն անջատում ուղղա-  
հայաց գծերով: Սխալ գրած տառերի (համարական մեծատառերը)  
ու կետերի վրա գիծ ենք քաշում և փոխարենը գրում ուղիղը  
(կարելի յեթիշտ ձիվը ցույց տալ նաև լուսանցքում): Յերբեմն, յերբ  
բառը շատ և աղավաղված կամ ուղղումը ցայտուն չե, կարելի և  
նույնիսկ ցանկալի յե ամբողջ բառն ուղիղ ձեռվ գրիլ լուսանց-  
քում և զրանով աշակերտի ուշադրությունը հրավիրել ձիշտ զրու-  
թյան վրա: Այսպես կանոն կետադրական բոլոր տեսակի սխալ-  
ների տակ քաշում ենք մի գիծ, իսկ տառասխալների, տողա-  
գրածի, մեծատառի, փոքրատառի, բառերի միացման, բառերի  
մասերն անջատ գրելու սխալների, բայց թողած տառի և ավելորդ  
տառի տակ յերկու գիծ: Զենք ընդգծում այն սխալները, վորոնք  
չեն ազդելու դնահատականների վրա և մեր կողմից հաշվառման  
չեն յենթարկվելու: Ընդգծված բոլոր սխալները հաշվում ենք  
և յերկու գծով ընդգծվածների թիվը (ուղղագրական սխալներ)  
դնում համարիչ, իսկ մեկ գծով ընդգծվածների թիվը (կետադրա-  
կան սխալներ) հայտարար: Կարելի յե նաև պարզապես գրել  
ուղղագրական սխալ՝ այսքան, կետադրական՝ այսքան:

Մի քանի խոսք շարադրությունները սրբագրելու մասին: Բոլոր  
տիպի ուղղագրական և կետադրական սխալների սրբագրության հա-

մար գործադրվում էն նույն միջազները, ինչ վոր թելադրության  
ժամանակ: Իսկ յաջ շարադրությունն ունի և յուր առանձնահատուկ  
սխալներ՝ շարադրուական, վոճական, բառերի վոչ տեղին գոր-  
ծածության, մտքի սխալ, հաջորդականության անհամապատաս-  
խանություն, մասերի սնհամաշափություն, անհաջող անալոգիա,  
մեջբերումներ կատարելու անկարողություն, մաքերն ամբողջա-  
ցընելու և ըրացնելու թերցումներ և այլն և այլն: Բոլոր այս տե-  
սակի սխալները պետք և ուղղել շարագրությունը խմբագրել  
յեթե այդ հնարյավոր և կարելությունը կարող և արդարացը-  
նել զրավորի վրա թափած ջանքերը, իսկ յեթե այդպիսի սխալ-  
ները շատ են, հատկապես շարադրուական սխալները խմբագրե-  
լու համար հարկավոր և ահագին ժամանակ կորցնել, վորը չի  
արդարացը ստացված արդյունքով, ապա կարելի յե վորոշ նշան-  
ներով, զիգզագաձեւ, կամ այլ տեսակի գծերով (տողերի տակ կամ  
լուսանցքում) նշումներ կատարել՝ դասարանում դրանց վրա կանգ  
առնելու համար: Որինակ, սխանք, աշակերտը մի սխալ բան և  
ասել կամ խեղաթյուրել և իրականությունը: յեթե սխալն ար-  
տահայտվել և մի բառով, ապա վրա վրա գրվում և հարցական  
նշան, յեթե սխալն արտահայտվել և մեկ կամ մի քանի նախա-  
դասությամբ, ապա այդ նախադասությունը կամ նախադասու-  
թյուններն ընդգծվում են զիգզագաձեւ գծով և վրան դրվում և  
հարցական նշան: Կարելի յե նաև այդ տողերի կողքին լուսանց-  
քի գծին զուգահեռ քաշել զիգզագաձեւ գիծը և զիմացը զնել հար-  
ցական նշան: Ի դեպ, ուսուցչի բոլոր տեսակի ուղղումներին ա-  
շակերտները վաղորոք պիտի ծանոթ լինեն, վոր տեսարակներն  
ստանալիս հառկանան, թե ինչ տիպի սխալներ են կատարել ի-  
րենք: Եյտականն այս հարցում այն, և վոր ուսուցիչը կատարված  
սխալների կողքով չանցնի, զրանք հաշվի առնի և աշակերտին  
բացատրի իր կատարած սխալները: Վնացած զեպքերում, յերբ  
կարելի յե մի կամ մի քանի բառ ավելացնելով, մի քանի բառ  
չնչելով կամ տեղափոխելով գրեկել գրությունը, շտկել շաբանյու-  
սությունը, ապա պետք և դրանք կատարել տեղին ու տեղը: Ել  
չենք խոսում բոլոր այն սխալների մասին, վորոնք կուղղվեն մի  
կամ մի քանի տառի փոփոխությամբ, այդպիսի ուղղումները  
պետք և կատարել ամենայն ուղղագրությամբ և ամենբակրիտառ-  
թյամբ: Գրավորների բարեխիգան և մանրակրիտ պրագրությու-  
նեց կախված և հետաքա յուրացումը, այդ պատճառով ուսուցչի  
առաջնորդող սկզբունքը պիտի լինի՝ բայց չթողնել վոչ մի սխալ

Եարակը ությունների ուղղություններն ոգտագրութելու տեսակետից ամենակարեվոր աշխատանքը կատարվելու յե դասարանում, ուր ուսուցչի ոգնությամբ աշակերտները հանգամանորեն կանգ են առնելու թե մտքի սխալների, թե կոմպոզիցիային վերաբերող հարցերի, թե հաջորդականությունն ու մասերի համաշափությունը խախտելու դեպքերի, թե հեղինակի մտքերը խեղաթյունը ունելու և թե շարահյուսական ու այլ տեսակի սխալների վրա:

Ավելացնենք, վոր վոչ միայն պետք ե սրբագրել բոլոր տեսակի սխալները, այլև ուղղությունները կատարել պարզ, ընթեռնելի Աշակերտը յուրաքանչյուր դեպքում լավ պիտի հասկանա, թի բնչն ե սխալ և վճռն ե ուղիղը, հակառակ դեպքում ուղղումը կարող ե վերածվել իր հակադրությանը: Ուղղությունները կատարելիս անհրաժեշտ ե ավելի ցայտուն արտահայտել ճշշտը, սրբագրածը, վորպեսզի դրա տպագորությունը ավելի վառ լինի, զուգորդումն ավելի ուժեղ:

### ՍԽԱԼՆԵՐԻ ԽՄՔԱՎՈՐՈՒԽՄԸ

Պայքարելու միջոցները մշակելուց առաջ անհրաժեշտ ե ճառնաչել վտանգը, նրա առանձնահատկությունները: Աշակերտների սխալների դեմ ուացիոնալ ձեռվ պայքարելու համար հարկավոր է ուսումնասիրել յուրաքանչյուր աշակերտի կատարած սխալների առանձնահատկությունները: Ընդհանուր դասարանի ուղղագրական աշխատանքները պլանավորելու համար պետք ե գուրս բերել դասարանի համար ընդհանուր բնույթ կրող սխալները: Հենց այս նպատակին ել ծառայելու յե սխալների խմբավորումը: Ինչպես վերելքում պարզվեց, աշակերտն ընդհանուր առմամբ կարող ե կատարել՝ ուղղագրական, շարահյուսական և կետազրական սխալը: Քանի վոր գրագիտության աստիճանը չափվում ե մեծ մասամբ աշակերտի ուղղագրական գրագիտության աստիճանով, այդ պատճառով ել հատուկ նշանակություն ե ստանում ուղղագրական սխալների խմբավորումը: Կետազրական սխալների խմբավորումը հեշտ ե և ծանոթ ուսուցիչներին: Այստեղ յես ուզում եմ ծանոթացնել ուղղագրական սխալների խմբավորման եյության հետ, վորն առաջին անգամ մշակել և ֆիլորդիական գիտության դոկտոր պրոֆեսոր Ա. Ղարիբյանը:

Ընդհանուր առմամբ ուղղագրական սխալները լինում են չորս տիպի՝ հնչյունական, ավանդական, քերականական և բարութային:

Հնչյունականը անպին են պատկանում բոլոր այն սխալները, վորոնք առաջ են գալիս ճիշտ արտասանվող բառը սխալ գրելուց: Հնչյունական տիպի սխալները կատարվում են այն բառերի մեջ, վորոնց գրությունն ու արտասանությունը համապատասխանում են միմյանց: Որինակ՝ աշակերտը լսում ե քաղաք, բայց գրում ե քախաք, լսում ե յերեք, գրում ե յերյեկ և այլն: Այս տիպի սխալները կարող են արտահայտվել.


ա) Տառերը բաց թողնելով, յերբ աշակերտը առանց վորեվի հիմքի չի գրում բառի վորեե տառը կամ տառերը: որինակ՝ լսում ե գպը ըոցի, բայց գրում ե նանմակ, լսում ե արե, գրում ե արը, լսում ե պանիր, գրում ե պաննիր, լսում ե մերժել գրում ե մեժել և այլն:

բ) Ավելորդ տառերը գը ելով, յերբ աշակերտը բառի մեջ իզուր տեղը ավելի տառերը գրում: որինակ, լսում ե նամակ, բայց գրում ե նանմակ, լսում ե արե, գրում ե արը, լսում ե տոնածառ, գրում ե տոնարժառ, լսում ե լը ակիր, գրում ե լինագիր և այլն:

շ) Հնչյունի տեղափոխությամբ, յերբ աշակերտը բառի վորեե հնչյունը տեղափոխում ե, որինակ, լսում ճանապարհ համար, գրում ե ճանապահար, լսում ե ճարտար, գրում ե ճառապահ և ճառապահիր, լսում ե պատվաստել գրում ե պավտաստել լսում ե ավարտել գրում ե ավարտել և այլն:

դ) Ճիշտ արտասանվող հնչյունը սխալ գրելով, յերբ աշակերտը լսում ե բառի ճիշտ արտասանությունը և սխալ և գրում վորեե հնչյունը: որինակ, լսում ե թարգի, գրում ե ցարավ, լսում ե թանաք, գրում ե տանաք, լսում ե Սարգիս, գրում ե Զարգիս, լսում ե Ժայռոտ և այլն:

Կատարվող սխալների ամենակարենը մասը վերաբերվում ե ավանդական տիպին: Այս տիպի սխալները կատարվում են այնպիսի բառերի մեջ, վորոնց գրությունը չի համապատասխանում արտասանությանը: Այժմ մենք 2000-ից ավելի բառեր ունենք, վորոնց գրությունը մնացել ե նույնը՝ ավանդականը, իսկ արտասանությունը փոխվել ե: Այսպես որինակ արտասանում ենք վաթթ, գրում ենք վարդ, արտասանում ենք ախչեկ, գրում ենք յեղայր, արտասանում ինք փոփոխեցի, գրում ենք ոթ, գրում ենք ոգ, արտասանում ենք ախչեկ, գրում ենք աղջեկ, արտասանում ենք յեխպայր, գրում ենք յեղաղեղ, արտասանում ենք փոփոխեցի, գրում ենք ոթ, գրում ենք ոգ, արտասանում ենք հաքուստ, գրում ենք հագուստ և այլն: Ուղղագրու-



թյան ուսուցման դորձում ամենամեծ դժվարությունը հաշը բուցում են հենց այդ տիպի սխալները, վորովհետև վորոշակի, սպառող կանոններ այս տիպի բառերի ուղղագրության համար չկան: Մոտավոր ընդհանրացումներ, ի հարկե, կարելի յե անել, բայց էմական միջոցը վերջին հաշվով մնում ե բառապատկերների յուրացումը: Այս տիպի մեջ պետք ի խմբավորել նաև այն սխալները, վոր առաջ են գալիս անձիշտ անալոգիայից, յերբ արտասանությանը համապատասխան գրություն ունիցող բառերը նույնպես գրվում են սխալ: Որինակ, ավանդական տիպի սխալների ազգեցության տակ աշակերտը գրում ե շքերգի, փոխանակ շքերգի և այլն:

